# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

• Կիր. 1 Ապրիլ. — Գալստեան: Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ, ի հանգիստ հոգւոց երեք բարձրաստիճան հոգեւոր դէմքերու — Թրքահայոց Պատրիարք Շնորհք Արքեպս. Գալուստեանի, վերջերս մահացած, Ս. Աթոռոյս Նախկին Ընտրեալ Պատրիարք Տիրան Արքեպս. Ներսոյեանի, քանի մը ամիսներ առաջ մահացած յԱմերիկա, և շաբաթ մը առաջ վախճանած Գանատայի Առաջնորդ Վազգէն Արքեպս. Քէշիշեանի: Պատարագեց և քարոզով մը երեքին ալ արժանիքներն ու բարեմասնութիւնները վեր առաւ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէլեան: Հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

• Գշ. 3 Ապրիլ. — Իրիկուան Հսկումին նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

• Եշ. 5 Ապրիլ. — Երեկոյեան, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին Հսկումը, որուն նախագահեց և քարոզեց Գերաշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

• Ուր. 6 Ապրիլ. — Խ. օր մեծ պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Արեւագալի»՝ իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղականի» վերջին ժամերգութիւնը:

• Շբ. 7 Ապրիլ. — Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը Ս. Գլխադրի մատրան մէջ մատոյց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան.

• Կիր. 8 Ապրիլ. — Ծաղկազարդ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանեկուոյն շուրջ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.ի: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտիք և Ասորիք, իբր հետեւակ համայնքներ: Կէսօրը անց էր երբ աւարտեցան արարողութիւնք, որմէ ետք Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք և Հայոց Թաղի մուտքէն «Որ զխորհուրդ քո գալստեան» շարականը երգելով եկաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Անդաստան» և — հոգեզմայլ տաղերով ընդմիջուած ժամերգութենէն յետոյ — «Դռնբացէք»ի մեծախորհուրդ կարգ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. կարդաց վարագոյր բացողներու (թիւով 30) անուանացանկը: Կատարուեցաւ, ըստ սովորութեան, հանգանակութիւն՝ ի նպաստ Աղուէնիէի Բուժարանին:

• Գշ. 10 Ապրիլ. — Աւագ Երեքշաբթի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Դարայեան: Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն: «Ուխտաւորաց» թափօրին նախագահեց և հարկ եղած բացատրութիւնները տուաւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

• Եշ. 12 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց): Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ապաշխարողաց» կարգէն ետք, Աւագ Սեղանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Սեւան Եպիսկ. Ղարիպեան և ընթերցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ճառը: Բաւական մեծ էր թիւը Ս. Հաղորդութեան մօտեցողներուն:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ոտնլուայի» արտաշարժ կարգին, որ ձայնասփռուեցաւ Իսրայէլեան ռատիոկայանէն: — Ներկայ էին բազմաթիւ օտար հրաւիրեալներ որոնց կարգին Անկլիքան Արքեպս.ը, որ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլերէնով:

— Ժամը 4.30ին, Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան գլխաւորեց Քրիստոսի առաջին երկու բանտերը — Ս. Հրեշտակապետ և Ս. Փրկիչ — այցելող թափօրը և խօսեցաւ թէ՛ առաջինին գաւթին մէջ գտնուող Ս. Ձիթենիի ծառին դիմաց և թէ երկրորդին կիսաւեր մատրան մէջ: Հոգեհանգիստ կատարուեցաւ Ս. Աթոռոյ հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար:

— Ժամը 7ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ «Խաւարման Կարգ»ը, որ տեւեց մինչև կէսգիշերուան մօտ: Քարոզիչն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ իր տպաւորիչ խօսքով վեր առաւ «Լացի գիշերուան» փրկարար նշանակութիւնը:

• Ուր. 13 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան): Կէսօրը քիչ անց, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ պաշտուած «Խաչելութեան Կարգ»ին:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած «Թաղման Կարգ»ին:

digitised by A.R.A.R.@

● Եր. 14 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ս. Զատկի): Առաւօտեան ժամը 10.15ին, Սուրբ Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնուելով Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ.ի ձեռքէն։

— Ժամը 11.20ին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր ամենայն կարգաւորութեամբ ընթացք առին «Լուսաւորեայ»ի և յարակից արարողութիւնները, սկսելով Սուրբ Գերեզմանի դրան կնքումէն։ Մեր Լուսահանը, Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Աստղեան Յունաց Թափօրի աւարտին, Ամեն. Տ. Տիոդորոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման։ Հոն կատարուած քանի մը վայրկեանի աղօթասացութենէն ետք, Նուիրական Լոյսը կը տրուէր դուրս՝ քովնտի զոյգ բացուածքներէն (մին Հայոց, միւսը Յունաց), լուսահիրներու կողմէ ակնթարթի մը մէջ հասնելու համար ձեռքը Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ բազմած էր մեր վերնամատրան պատշգամին մէջ։ Անմիջապէս զուարթօրէն ղօղանջել կը սկսին Տաճարին բոլոր զանգակները ու կոչնակները, մինչ Լուսահան Հօր գլխաւորութեամբ (որ կը կրէր խոյր եպիսկոպոսական) Ս. Գերեզմանին շուրջ ընթացք կ'առնէ Յարութեան շարականներ երգող եռագարձ մեր Թափօրը, հետեւողութեամբ Ղպտոց և Ասորւոց Թափօրներուն։ Վանք դարձին, Դաւթի բերդին դիմացէն, Յարութեան շարականներ երգելով, Միաբանութիւնը մուտք գործեց Մայր Տաճար, ուր ժամ մը ետք ընթացք պիտի առնէր «Ճրագալոյցի» արարողութիւնը, իսկ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Աստղեան։ Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուած Նախատօնակի աւարտին, Միաբանութիւնը «Այսօր յարեաւ» շարականը երգելով բարձրացաւ վանքի սեղանատունը՝ ընթրիքի։

● Կիր. 15 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ: Կէսգիշերէն երկու ժամ ետք (ամառնային ժամ), Մայրավանքի մեծ զանգը ոտքի է հանած Միաբանութիւնը, որ քիչ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի գլխաւորութեամբ, կը մեկնի Ս. Յարութեան Տաճար, ուր վերնատան մեր մատրան մէջ կը պաշտուի ժամերգութեան մէկ մասը, իսկ Յունացեալը՝ Սուրբ Գերեզմանին շուրջ կատարուած մեծահանդէս Թափօրի ընթացքին, որուն կը հետեւէին Ղպտիք և Ասորիք։ — Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը և քարոզ մը խօսեցաւ օրուան մեծ տօնին մասին։ Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւնը «Քրիստոս Յարեաւ»ը երգելով յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան։

— Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ պաշտուած «Անդաստան»ին հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Բշ. 16 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատկի (Յիշատակ մեռելոց): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, քարոզեց Յարութեան խորհուրդին շուրջ և ապա, ամպհովանիի տակ և Ս. Խաչափայտի մասունքը ի ձեռին, նախագահեց եռագարձ Թափօրին, որմէ ետք Միաբանութիւնը երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամեն. օրհնուած նշխար բաժնեց բոլորին։

● Գշ. 17 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։ Հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Եշ. 19 Ապրիլ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.։

● Ուր. 20 Ապրիլ. — Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Սեւան Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

● Եր. 21 Ապրիլ. — Գլխատումն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.։

● Կիր. 22 Ապրիլ. — Նոր Կիրակի (Յիշատակ Ծահասակաց)՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Յարութեան Տաճարի Տեսուչը՝ Գերշ. Տ. Վաղարշ Եպիսկ.։ Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտամունք վասն հայ նահատակաց, որուն նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Եր. 28 Ապրիլ — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցի հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.։

● Կիր. 29 Ապրիլ. — Աշխարհամատրան (Կանաչ) Կիրակի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, քարոզեց Յինանց միջոցի Կիրակիներուն թելադրած խորհուրդին շուրջ և նախագահեց «Անդաստան»ին, որով աւարտեցան Զատկական շրջանին կապուած հանդիսութիւնները Քրիստոնէութեան մեծագոյն այս սրբավայրին ներս։

digitised by A.R.A.R.@



15 Ապրիլ 1990 Զատիկին, Վանքի մեծ
բակին մէջ Անդաստան:



12 Ապրիլ 1990, Աւագ Հինգշաբթի, Ոտնլուայ. Անկլիքան եկեղեցւոյ
Եպիսկոպոս Գեր. Տ. Քաթիֆէ կ՚ընթերնու Աւետարան:

digitised by A.R.A.R.@

● Եր. 5 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Թաղմիկ Վրդ. Գօզուեան։

● Կիր. 6 Մայիս.— Կարմիր Կիրակի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Դարայեան։

● Եր. 12 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 13 Մայիս.— Տօն Երեւման Ս. Խաչին (351)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ, որուն վերեւ կը տեսնուէր գունաւոր կանթեղներով զարդարուն Ս. Խաչին նշանը։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան, որ քարոզ խօսեցաւ օրուան խորհուրդի մասին։ Ս. Կիւրեղ Հայրապետի Թուղթը ընթերցաւ Լուսարարապետ Սրբազանը։

● Եր. 19 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողլեան։

● Կիր. 20 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։ Գերշ. Տ. Դաւիթ Եպիսկ. նախագահեց Հանգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի մահուան առաջին տարելիցին առթիւ կատարուած հոգեհանգստեան կարգին։

● Դշ. 23 Մայիս.— Քաղաքական խառնակ կացութեան պատճառաւ, այս տարի փոխան Ձիթենեաց լերան, բոլոր քրիստոնեայ համայնքները մեծ այս տօնը հանդիսաւորեցին իրենց մայրավանքերէն ներս։ — Ի Ս. Յակոբ պաշտուած նախատօնակին նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Եշ. 24 Մայիս.— ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Գերշ. Տ. Դաւիթ Եպիսկ. Սահակեան։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Աթոռոյ Սիոնէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձի առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանքին»։

● Եր. 26 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

● Կիր. 27 Մայիս.— Երկրորդ Ծաղկազարդ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, փոխան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ, որ նորոգութեան մէջ է։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Թաղմիկ Վրդ. Գօզուեան։ Քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։

● Եր. 2 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Հոգեգալստեան հանդիսաւոր նախատօնակին։

— Գիշերակերգին, հոն պաշտուած «Ընկեցէք» և Հակման կարգերուն եւս նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Կիր. 3 Յունիս.— ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Բարեկենդան եղիական պահոց)։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց, Ոսկեբերանի Հոգեգալստեան Ներբողը ընթերցաւ և կուռ քարոզ մը խօսեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. գլխաւորեց դէպի Սիոն լեռ ընթացող թափօրը, որ նախ ուղղուեցաւ Վերջին Ընթրեաց վերնատունը, ուր կարճ արարողութիւն մը կատարելէ ետք Ս. Փրկչի գաւիթին մէջ հոգեհանգիստ եղաւ Պատրիարքաց հոգիներուն համար։ Սրբազանը ըրաւ նաև քանի մը խօսք։

● Եր. 9 Յունիս.— Է. օր Հոգեգալստեան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.։

● Կիր. 10 Յունիս.— Յիշատակ Եղիայի մարգարէին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան։

● Ուր. 15 Յունիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Եր. 16 Յունիս.— Ս. Գր. Լուսաւորչին (Ելն ի վիրապէն)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողլեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որմէ ետք ծնրադիր «Տէր ողորմեա» երգուեցաւ։

● Կիր. 17 Յունիս.— Տօն Կաթուղիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի։ Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէլեան։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց «Հայրապետական Մաղթանքի» արարողութեան։

● Եր. 23 Յունիս.— Ս. Մեծին Ներսիսի եւ Խադայ եպիսկոպոսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Ն (ուխտի Պատարագ)։

● Կիր. 24 Յունիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Եր. 30 Յունիս.— Ս. Գր. Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ, ուր ըստ աւանդութեան թաղուած է մասունքը մեր Հաւատոյ Հօր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Բշ. 9 Ապրիլ. — Հրէից Պասեքի տօնին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր յղեց Իսրայէլի Նախագահ Վեհ. Հայիմ Հէրցոկի, Վարչապետ Իցհաք Շամիրի, Քնէսէթի Նախագահ Տով Շիլանսքիի և Քաղաքապետ Թէտի Քոլլէքի։

● Դշ 11 Ապրիլ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան մեկնեցաւ Յոհաննէսպուրկ, Զատկական տօներուն առթիւ պատարագելու և հոգևոր մխիթարութիւն ջամբելու Հարաւային Ափրիկէի փոքրաթիւ Հայ գաղութին։ Վերադարձաւ Կիրակի, 29 Ապրիլին։

● Բշ. 30 Ապրիլ. — Կէսօրէ ետք, Իսրայէլի Անկախութեան 42րդ տարեդարձի առիթով, Քաղաքապետ Վեհ. Թէտի Քոլլէքի կողմէ, Դաւթի բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Կիր. 6 Մայիս. — Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. և Տիար Կ. Հինդլեան ներկայ եղան Russi n Compoundի մէջ, նորոգ վախճանեալ Համայն Ռուսիոյ Պիմէն Պատրիարքի հոգւոյն համար կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին։

● Շբ. 12 Մայիս. — Պապական Նուիրակը երկրէս մեկնումին առիթով հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան։

● Կիր. 13 Մայիս. — Կէսօրէ ետք, Պապական Նուիրակը, Մօնս. Քարլօ Քուրիս, իր մօտալուտ մեկնումին առթիւ, ողջերթի ընդունելութիւն մը տուաւ Notre Dame Centreի մէջ։ Ներկայ էին Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Եշ. 17 Մայիս. — Սպանական նոր Հիւպատոս Juan Serat իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ս. Պատրիարք Հօր։

● Շբ 19 Մայիս — Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի տարեկան Պազարին։

● Դշ. 23 Մայիս. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Գերմանական Եկեղեցւոյ Երէցներու խումբ մը։

● Եշ. 24 Մայիս. — Կէսօրուան ժամ., Համբարձման լերան Գերմանական Augusta Victoria հիւանդանոցի շրջափակին մէջ գտնուող մատուռին ընդարձակման և բարեզարդման առիթով կատարուած գոհաբանական պաշտամունքին և ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Կիր. 27 Մայիս. — Կէսօրէ առաջ, Դոմինիկեաններու Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ, Ecole Bibliqueի հաստատման 100ամեակին առթիւ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և յաջորդող ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերաշ. Տ. Դաւիթ Եպս., Տ. Օհան Եպս., Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

— Կէսօրէ ետք, նոյն առթիւ, Ֆրանսական Հիւպատոսին կողմէ, Ecole Bibliqueի Տնօրէնին ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. և Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ.։

● Կիր. 3 Յունիս. — Holy Land Studiesի նոր Տնօրէնին ժամանման առթիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան և Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

● Բշ. 4 Յունիս. — Հոգեգալստեան տօնին առիթով, Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքի տուած ընդունելութեան ներկայ էին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Գերշ. Տ. Դաւիթ Եպս. և Հոգշ. Տ. Համբարձում Վրդ.։

● Բշ. 11 Յունիս. — 2 Յունիսին զուգադիպած Իտալիոյ ազգային տօնին առիթով, Իտալական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Դշ. 13 Յունիս. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը այցելութիւն մը տուաւ Քաղաքապետ Վեհ. Թէտի Քոլլէքի։

— Կէսօրէ առաջ, Ս. Անտոն Փադուացւոյ տօնին առթիւ, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ, Կիւսթոտին կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և յաջորդող ընդունելութեան ներկայ եղան Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վազգէն Եպս. Խաչատուրեան և Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

● Շբ. 16 Յունիս. — Բեթղեհէմի Քաղաքապետ Վեհ. Էլիաս Ֆրէյճ այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Եշ. 21 Յունիս. — Երեկոյեան, Անգլիոյ Եղիսաբէթ Բ. Թագուհւոյ ծննդեան 65րդ տարեդարձին առիթով, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Կիր. 24 Յունիս. — Կէսօրէ ետք, Լատինաց Յովհաննու Կարապետի Ծննդեան տօնին առթիւ, Բեթղեհէմի Սէյնթ Ճօն եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և Մալթայի Ս. Յովհաննէս Ասպետներու ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Դաւիթ Եպս. և Հոգշ. Տ. Գուսան Վրդ.։

● Բշ. 25 Յունիս. — Կէսօրէ ետք, Cinemathequeի մէջ ցուցադրուած Հայկական Ցեղա-

digitised by A.R.A.R.@

## Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կոնդակներ, Քարոզներ, Ելոյթներ — Վազգէն Ա. Պալճեան, Հայրապետ Հայոց։ Գիրք Զորրորդ։ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1983, էջ 198։

Համառօտ Տարեգրութիւն (1908 – 1955) — Սուրէն Շտիկեան-Վանեցի։ Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986, էջ 818։

Երիմեան Հայրիկ Որպէս Դաստիարակ — Կ. Պալճեան (Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց)։ Նիւ Եորք, Ս. Վարդան Մատենաշար, 1987, էջ 122։

Շարական Սպրիկեան Նահատակաց — Զարեհ Եպս. Ազնաւորեան։ (Հայերէն-Անգլերէն-Ֆրանսերէն)։ Անթիլիաս, Տպ. Կաթ. Հայոց Կիլիկիոյ, 1990, էջ 77։

Երկու Սերունդ — Պօղոս Սնապեան (Խմբագիր)։ Հրատ. Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի, Թիւ 15։ Անթիլիաս, Տպ. Կաթ. Հայոց Կիլիկիոյ, 1980, էջ 340։

Պէտք Զունինք Քեզի ... — Անդրանիկ Վրդ. Կռանեան։ Վիեննա, 1987, էջ 40։

Երջանկութիւնը որ Իմս չէր ... — Շահանդուխտ։ Վիեննա, 1989, էջ 217։

Նիւթեր Հայ Վանականութեան Պատմութեան (ԺԴ.–ԺԷ. Դար) — Հայր Տաճատ Եարթըմեան։ Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 45։

Հայկական Կիլիկիոյ Բերդերն ու Բերդաքաղաքները — Հեղինակ՝ նոյն։ Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 629։

Հայաստանի Բերդերը — Հ. Միքայէլ Վրդ. Ցովհաննէսեան։ Հայկ. Մատենաշար Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան։ Վենետիկ, Ս. Ղազար, 1970, էջ 1014։

Երնջակը — Արման Վարդանեան։ Թասերախազ։ Իսթանպուլ, 1990, էջ 123։

Ցուշարձան Վահրամիս — Վաչէ Վահեան։ Պէյրութ, 1977, էջ 154։

Հայր Ռոմանոյի Ցուշերը — Պրունօ Ռօմանօ։ Պէյրութ, 1986, էջ 426։

Բարեւ, Մենք Ենք — Ժողովածու Հայ Գրականութեան, Պատանիներու համար)։ Աթէնք, Համազգային Մշակութային և Կրթական Ընկերակցթ., 1989, էջ 201։

Կենսաբրեցում — Վարուժան Պետիկեան։ Բանաստեղծթ.։ Լոս Անճելըս, 1990, էջ 122։

Փլուզում եւ Վերածնունդ — Անդրանիկ Անդրէասեան։ Վէպ Երեք Հատորով։ Դէպի Մայրամուտ, Ա. Հատոր, Վէպ՝ 1896–1915ի Շրջանին։ Պոստոն, 1989, էջ 270։

Եսսենացիք — Բարգէն Վրդ. Թոփճեան։ (Ուսումնասիրութիւն)։ Բ. Տպագրութիւն։ (Գիւտին 40ամեակին առթիւ)։ Մոնթրէալ, 1987, էջ 114։

Ճեպընթաց Տարիներ – Գիրք եւ Հեղինակ — Լեւոն Սափակլեան։ Փարիզ, 1990։ Տպ. Պէյրութ, Կ. Տօնիկեան և Որդիք, էջ 202։

Տարեգիրք – Ալպոմ — Ս. Յակոբ Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Վարժարան։ Թիւ 1, 1988, էջ 54 – Թիւ 2, 1989, էջ 24, Թիւ 3, 1990, էջ 28։ Մոնթրէալ, Գանատա։

Հովուական Աստուածաբանութեան Գործնական Ձեռնարկ — Ցովհան Տ. Վրդ. Տէրտէրեան։ Թորոնթօ, 1989, էջ 94։

Հոգեւոր Քարոզներ — Հեղինակ՝ նոյն։ Պրակ Գ.։ Մոնրէալ, 1990, էջ 22։

Հայ Եկեղեցու Սարկաւագուհիները Կանոնական Տեսանկիւնէն Դիտուած — Աբէլ Աբեղայ Օղլուգեան։ Թորոնթօ, 1990, էջ 48։

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՑՃԵԱՆ
Քարտուղար Մատենադարանի

(Շարունակելի)

---

ապանութեան ժապաւէնին ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. և Հոգշ. Միաբան Հայրերու հետ, և Անգլերէնով խօսք առաւ, պատասխանելով թղթակիցներու հարցումներուն։ Ներկայ էին Քաղաքապետ Վանս. Թէտի Քոլլէք, որ նմանապէս խօսք առաւ, և հանգ. Նազէլեան մրցանակաւոր Անտրէյ Սախարովի այրին՝ հայազգի Ելենա Պոններ — որ քանի մը օրեր ետք Պատրիարքարան ալ այցելեց — և այլ ականաւոր դէմքեր։

digitised by A.R.A.R.@